ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2671-Ա « 07 » հուլիսի 2025թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի Հ.365-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի հունիսի 24-ի հ.365-Ա որոշման համաձայն՝ 2020 թվականին ձեռք բերված 1,825,000,000.0 (մեկ միլիարդ ութ հարյուր քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 100 հատ ԳԱԶ A68R52 մակնիշի ավտոբուսները, 2021 թվականին ձեռք բերված 7,199,920,000.0 (յոթ միլիարդ մեկ հարյուր իննսունինը միլիոն ինը հարյուր քսան հազար) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 161 հատ ZHONGTONG BUS, LCK6860HGN մակնիշի ավտոբուսները և 2021 թվականին ձեռք բերված 2,236,000,000.0 (երկու միլիարդ երկու հարյուր երեսունվեց միլիոն) ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ թվով 50 հատ ZHONGTONG BUS, LCK6860HGN մակնիշի ավտոբուսներն անհատույց օտարվել (նվիրվել) է «Երևանի Ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերությանը:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի հունիսի 24-ի հ.365-Ա որոշումը.

1. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, «Երևանի Ավտոբուս» փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել 100 հատ ԳԱԶ A68R52 մակնիշի, 161 հատ ZHONGTONG BUS, LCK6860HGN մակնիշի և 50 հատ ZHONGTONG BUS, LCK6860HGN մակնիշի ավտոբուսների նվիրատվության պայմանագիր:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի տեղակալ Ս. Գրիգորյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ